

գ.Նալբանդյան

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ընդհանուր ժողովի կայացած` 23.01.2014, 14:00-ին : ժողովի աշխատանքներին մասնակցում են ՀՀ Արմավիրի մարզի մարզապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ` Վ.Միրզախանյանը , համայնքի 125 բնակիչներ, գյուղապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ աշխատողներ:

նախագահությամբ`

Գ.Մկրտչյանի՝

քարտուղարությամբ`

Ի.Պետրոսյանի

Օրակարգը

1. 2013 թվականի 2-րդ կիսամյակի գյուղապետարանի աշխատակազմի կատարած աշխատանքների հաշվետվություն
2. Համայնքի խնդիրների մասին

1. Լսեցին- Գյուղապետարանի 2013 թվականի 2-րդ կիսամյակում աշխատակազմի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը /զեկ. համայնքապետ` Գ.Մկրտչյան/

Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց այն հիմնական աշխատանքները, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակաշրջանում, մասնավորապես նշվել , որ ընթացիկ տարիների իրականացվել է բյուջեով և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքները ամբողջ ծավալով:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավիճակը է ավագանու 6 նիստ, որից 3 հերթական և 3 արտահերթ: Նիստերում քննարկվել են բյուջեի փոփոխության 3 հարց, սոցիալապես անապահով ընտանիքների դրամական օգնության հատկացման մասին 5 հարց, սոցիալապես անապահով ընտանիքների գույքահարկը զիջելու վերաբերյալ 3 հարց, հողի աճուրդ վաճառքի մասին 1 հարց: Հաշվետու ժամանակաշրջանում հողի հարկի գանձման պլանը կատարվել է 102.7% , գույքահարկի պլանը 108.7% , տեղական տուրքերի պլանը` 26.4%:

Ավագանու նիստը հաստատվել է 2014 թվականի տեղական տուրքերի և վճարները, աշխատակազմի աշխատակիցների թիվը, հաստիքները և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատակազմի գործունեությանը խիստ լարվածություն է մտցվել մայիսի 12-ի կարկտահարությունը, որից հետո գյուղապետարանի աշխատակազմի գործունեության նպատակաուղվել է կարկտահարության հետևանքների վերացմանը: Օպերատիվ կերպով կազմակերպվել են համապատասխան ցուցակներ և ներկայացվել են վերադասներին և ստացված օգնությունները հատկացվել են ազգաբնակչությանը: Կազմակերպվել են օգնության հատկացված սերմերի, պարտանյութերի և դիզվառելիքների բաշխման առավել տուժած ընտանիքների, որը շարունակվում է մինչև օրս: Հաշվետվության ժամանակաշրջանում շարունակվեց համայնքի „Մշակույթի տան“ և մանկապարտեզի հիմնարար նորոգման աշխատանքները, ինչպես նաև համայնքային փողոցների բարեկարգման և ավագապատման

աշխատանքները: Համայնքում ավադույթ է դարձել պետական տոների հավուր պատշաճի կազմակերպման և անցկացման աշխատանքները, որտեղ իրենց մասնակցությունն են ունենում ինչպես համայնքի բնակիչները, այնպես էլ մարզպետարանի աշխատակիցները:

Համայնքում առանձնակի ուշադրության կենտրոնում է եղել բնակչության ընդունելության աշխատանքների կազմակերպումը: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի մոտ ընդունելության են եկել 214 բնակիչներ, իսկ ավագանու մոտ 84 մարդ:

Հաշվետու ժամանակաշրջանում բնակչությունից ստացվել են 153 դիմում: Յուրաքանչյուր դիմում սահմանված ժամկետում ընթացք է տրվել, իսկ առանձին դիմումներ, որոնք դուրս են գյուղապետարանի լիազորություններից բնակիչներին ուղղորդել են համապատասխան կազմակերպություններ:

Ընդունելությունների ժամանակ բարձրացված հարցերին և դիմում-բողոքներին ընթացք է տրվել առաջնահերթության կարգով: Համայնքի աշխատակազմը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել բնակչության խմելու ջրի մատակարարման հարցերը: Խմելու ջրերը համայնքում իրականացվում է սահմանված ժամանակացույցով: Գյուղապետարանի կողմից սեղմ ժամկետում կատարվել են ջրագծերի վերանորոգման աշխատանքներ: Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է եղել բնակչության հանգստի կազմակերպումը: Ամռան ամիսներին հնարավորինս արդյունավետ է կազմակերպվել բացօթյա հանգիստը: Ուշադրության կենտրոնում է եղել նաև դպրոցական երեխաների միջոցառումները, որոնցում գյուղապետարանը իր մասնակցություն է ունեցել էքսկուրսիաների կազմակերպման և միջոցառումների անկացման աշխատանքներում:

Արտահայտվեցին- Ա.Գալստյան, Է. Քոչարյան, Ն.Մարտիրոսյան

Լսեցին- Գյուղապետարանի աշխատակազմի 2014 թվականի գործունեության առաջնահերթությունների մասին

Արտահայտվեցին՝ - Ա.Սեդրակյան, Ա.Եղիազարյան, Տ.Հատոյան

Հիմք ընդունելով համայնքի սոցիալ-տնտեսական քառամյա ծրագիրը՝

- Որոշեցին- 2014 թվականի ընթացքում առաջնահերթության կարգով՝ իրականացնել
1. „Մշակույթի տան“ հիմնանորոգման աշխատանքների ավարտում:
 2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ավարտում և շահագործումը:
 3. Կենտրոնական ճանապարհների լուսավորության անցկացում:



Գ.Մկրտչյան